***484. ԽԱՉՔԱՐ.*** Ս. Սիոն մատուռի արևմտյան մուտքի հարավային կողմում, մակերեսին, 13 տող.



Ի ՆԾԴ (1005) ԹՈՒ⌊ԻՍ⌋, Ի ՀԱՅՐՈՒԹ⌊ԵԱՆ⌋ ՍԻ-ՄԵՒՈՆԻ, ԵՍ՝ ԱԹԱՆԱԳԻՆԻ ԵՒ ՓԻԼԱՔՍՈՆ, ԿԱՆԳ-ՆԵՑԱՔ ԶՍՈՒՐԲ ԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՈՑ ՄԵՐՈՑ,
ԵՒ ՅԱՒԳՆ-
ԱԿԱ-
ՆՈՒԹԻՒՆ
ԹԱԳ-
ԱՒՈՐ-
ԻՍ
ՄԵ-
ՐՈՅ
ԴԱՒ-
ԹԻ
ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԵՐԿՐՊԱԳՈՒ-
ԱՑ ԻՒՐՈՑ

*Հրատ.* Որիմեցի, 42, Երզնկյան, 68, «Ազգ. հանդ.», VII-VIII, 416, ՎՏ, 12, Մովսիսյան, 48, Ղաֆադարյան, Հաղբատ, 249:

***Ծանոթ.*** Խաչքարը կանգնեցվել է ոչ միայն հեղինակների հոգու փրկության համար, այլ նաև ***յաւգնականութիւն թագաւորիս մերոյ Դաւթի***, որտեղ խոսքը վերաբերում է Դավիթ Անհողինին: Հայր ***Սիմեւոնը*** հիշված է նաև Մեծ Գավթի 1004թ. արձանագրության մեջ: Նա առաջին վանահայրն է:

## ԿԱՅԱՆ ԲԵՐԴ

***485. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.*** Կայան բերդում, արևմտյան ճակատին, 6 տող.



Ի ԹՎ⌊ԻՆ⌋ :ՈՁԲ: (1233),

ԿԱՄԱՒՆ ԱՅ, ԵՍ՝ ՏՐ ՅՈՀԱՆԷՍ, ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՂԲԱՏԱ, ՔՈՒԵՐՈՐԴԻ ՄԵԾ ՊԱՏՐՈՆԱՑՆ ԶԱՔԱՐԷԻ ԵՒ ԻՒԱՆԷԻ, Ի ԺԱՄԱՆԱԿԻ, ՈՐ ԵՀԱՍ ՍԱՍԱՆՈՒՄՆ ԱՇ⌈ԽԱՐՀԻՍ ՄԵՐՈՅ ԱՆԱՒՐԷՆ ԽՈՐԱԶՄ⌉-

ԵՆՑ, ՈՉ ԳՈՅՐ ՏԵՂԻ ԱՊԱՍՏԱՆԻ ՍԲ ՆՇԱՆԻՍ ԵՒ ԵՂԲԱՐՑՍ: ՀՐԱՄԱՆԱՒ ՔԵՌՈՅՆ ԻՄՈ ԻՒԱՆԷԻ ԵՒ ՈՐԴՈՅՆ ԻՒՐՈՅ ԱՒԱԳԻՆ, ԵՒ ՇԱՀՆՇԱՀԻ՝ ՈՐԴՈՅՆ ԶԱՔԱՐԷԻ, ՇԻՆԵՑԻ ԶԱՄՐՈՑ⌈Ս ԵՒ ԶԵԿԵՂԵՑԻՍ ՀԱՂԲԱՏԱ ՍԲ ՆՇԱՆԻՍ⌉

ԲԱԶՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԹ⌊ԵԱՄ⌋Բ: ԱՐԴ, ԵԹԵ ՈՔ ԶՍԱ Ի ՀԱՂԲԱՏԱ ՀԱՆԷ, ԹԷ Ի ՄԵԾԱՑ, ԹԷ Ի ՓՈՔՈՒՆՑ ԶԻՆՉ ԵՒ ԻՑԷ ՊԱՏՃԱՌԱՒ, ՄԱՐԴՆ ԱՅՆ ՆԶՈՎԵ⌊Ա⌋Լ ԵՂԻՑԻ Ի ՄԱՀ ԵՒ Ի ԿԵԱՆ⌈Ս, ԶԻՆՉ Ի ՅԱՂԱՄԱ ՄԻՆՉԵՒ Ի ԳԱԼՈՒՍ⌉-

ՏՆ ՔԻ ՆՁՈՎՔ ԿԱ՛ Ի ՎԵՐԱ ՆՈՐԱ ԵԴԻՑԻ, ԵՐԵՐԵ[Ա]Լ ԵՒ ՏԱՏԱՆԵ[Ա]Լ ԼԻՑԻ ՈՐՊԷՍ ԿԱԵՆ, ԵՒ ԲԱԺԻՆ ԶՅՈՒԴԱՒՆ ԱՌՑԷ, ԵՒ ԱՒԱՆԴԻՉ ՅՈԳՈ ՆՈՐԱ ՍԱՏԱՆԱ ԼԻՑԻ: ԵՒ ԱՌԱՋՆՈՐ[Դ ՈՐԷՆ Ի ԿԱՄՍ ԻՒՐՈ ԿԱՄ ՆԱԽԱՆՁՈՒ],
ԿԱՄ ՕՐԻՆՈՒԹ[ԵԱՄ]Բ, ԿԱՄ ԿԱՇԱՌՈՒ ԶԱՍ Ի ՅԱՂԲԱՏԱ ՅԱՆԷ՛ ԶՎԵՐԱԳՐԵԱԼ ՆՁՈՎՍՆ ԱՌՑԷ: ԵՒ ՈՐՔ ՅԱՍՏԱՏ ... Ն՛ ԱՒՐՀՆԻՆ ՅԱՅ: ԵՎ ՊԱՐՏԻՆ ԻՆՁ ՏՐ ՅՈՀԱՆԻՍԻ ԶԱԾ ԱԾԻՆ ՏԱՒՆԻ [Գ (3) ԱՒՐՆ Ի ԱՄԱ ԶՊԱՏԱՐԳՆ ԻՆՁ]:

*Հրատ.* Ղրիմեցի, 44, Ջալալյանց, Ա, 81-82, Երզնկյան, 72, «Ազգ. հանդ.», III, 318, ՎՏ, 77, Brosse, Discription. 44, «Արարատ», 1887, 232-233, Ղաֆադարյան, Հաղբատ, 250-251 Ոսկյան, Գվ, 232-233:

***Ծանոթ.*** Արձանագրությունը գրված է Հաղբատի վանահոր՝ Հովհաննեսի անունից: Կ. Ղաֆադարյանը գրում է. «Այս ամրոցը, որ այժմ Կայան բերդ է կոչվում, հնում ինչպես տեղեկանում ենք այս արձանագրությունից, ամրոց ***Հաղբատայ սբ. Նշանի*** է անվանվել»: Հին անվան պատճառը Հաղբատի վանքի կողմից կառուցված լինելն էր, ինչպես և վտանգի դեպքում միաբանության հարստությունները այնտեղ պատսպարելու մտադրությունը, որ նպատակով էլ կառուցվել է ամրոցը: Սակայն հարկ է նշել, որ ***զանառիկն Կայան, զանմատույցն Կայան*** հիշատակված է դեռևս 1178 թ.՝ Դավիթ Քոբայրեցու «Մեկնություն» հիշատակարանում (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 223, 224) և պետք է կարծել, որ այն ավերել են թուրք-սելջուկները, իսկ 1233-ին տեր Յոհաննէսը վերաշինել է այն՝ ծանրագին աշխատանքը որակելով ***շինեցի զամրոցս*** արտահայտությամբ:

Երկրորդ տողի ***եւ սրբոյն իւրոյ*** հարկ է շտկել ***եւ որդոյն իւրո՛*** ինչպես փորագրված է տեղում: Սուրբ Նշանի և միաբանության (=***եղբարցս***) ապահովության ու անվտանգության մտահոգությունը լիովին հասկանալի է. դեռևս թարմ էր Ջալալ էդ-Դինի (=***խորազմենցն***) արշավանքի սարսափը և ***ոչ գոյր տեղի ապաստանի սբ Նշանիս և եղբարցս:*** Սուրբ Նշանը Քրիստոսի խաչափայտի նշխարն է, որը Հայաստան է բերել կույս Հռիփսիմեն, և Խոսրովանույշը այն նվիրել է վանքին ու անվանակոչել եկեղեցին: Քրիստոնեական աշխարհում ամենահարգված սրբությունն է և ամեն մի հաստատության սուրբ-սրբոցը:

Սթագնած է 3-րդ տողի ***շինեցի զամրոցս եւ զեկեղեցիս Հաղբատա սբ Նշանիս բազում աշխատութեամբ*** հատվածը, որից տպավորություն է ստեղծվում, թե Հովհաննեսը շինել է նաև Ս. Նշան եկեղեցին: Մինչդեռ հասկանալի է, որ շինել է ամրոցը (Կայան բերդում) և եկեղեցին (Դրսեվանքը) հանուն Հաղբատի սուրբ Նշանի, թեև, հասկանալի է, ուներ առհասարակ պաշտպանական նպատակ:

Վճռախախտման դեպքում այս աստիճան ճոխ ու ահավոր անեծքի բանաձևումը հուշում է թե Սանահին-Հաղբատ հակամարտության և թե արտաքին թշնամու նկատմամբ ունեցած անհանգստության մասին:

***486. ԳԵՐԵԶՄԱՆԱՍԱԼ.*** Կայան բերդում, եկեղեցու մոտ, մակերեսին, 8 տող.



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ
ՄԱՐԳԱՐ
ԵՐԶՆԿԵԱՆՑԻ:
ՎԱԽՃԱՆԵԱԼ
Ի 1835 ԱՄԻ:
Ի ՆԵՐՔՈՅ ՎԻՄԻՍ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ
ՄԱՐԳԱՐԱՅ ԵՐԶՆԿԵԱՆՑ, ՎԵՐԱՆՈՐՈԳՈՂ
ՏԱՃԱՐԻՍ, ՈՐ ՆՆՋԵԱՅ Ի ՏԷՐ:

***Ծանոթ.*** Տապանաքարը լավ մշակված-հղկված բազալտ քար է: Վերջին անգամ Մարգար Երզնկյանն է նորոգել ամրոցի ներսի եկեղեցին (որն այժմ կիսավեր է), և ինքն էլ հավերժական հանգիստ է գտել այստեղ, հավանաբար իր պատվիրանով:

*Լուսանկարում վերջին երեք տողը չի երևում (խմբ.):*

***487. ԽԱՉՔԱՐ.*** գյուղից դեպի Դեբետի ձորը տանող արահետի կողքին, բարձր պատվանդանի վրա, 4 տող.



Ի ՈՃ (1201) ԹՎ[ԻՆ]. ԵՍ՝ ԹՈՄԱ ԱՆԱՐԺԱՆ ՔԱՀԱՆԱ, ԿԱՆ-
ԿՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԵ[ԱՆ] ԻՆՁ Ե-
Ւ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ ԵՒ ԵՂԲԱՐՑ. ՈՐՔ ԵՐԿՐ-
ՊԱԳԷՔ՝ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ ԶՔԵՐՈԲՍ:

*Հրատ.* Դրիմեցի, 39, Երզնկյան, 69,«Ազգ. հանդ.», VII-VIII, 417, ԿՏ, 45, Ղաֆադարյան, Հաղբատ, 254:

***Ծանոթ.*** Խաչքարը կանգնեցվել է Թոմա քահանայի և ծերծավորների բարեխոսության համար, սակայն դիմում է նաև Քերոբին հիշելու հայցով: Կ. Ղաֆադարյանի կարծիքով՝ Քերոբը խաչքարի կազմողն է:

***488. ԽԱՉՔԱՐ.*** գյուղի արևմտյան ծայրին, ճակատին 1, թիկունքին՝ 4 տող.



Ի ԹՈՒ[ԻՆ] ՀԱ[ՅՈՑ] ՈՀԲ (1223):
ՏՐ ԱԾ ՈՂՈՐՄԵԱ ՅՈ-
ՎԱՆԷՍ ՔԱՀԱՆԱՒ ԵՒ
ԱՄՈՒՍՆՈՅ ԻՒՐՈՅ ԲԱ-
ՆՈՒՔԻՆ: ԱՄԷՆ:

*Հրատ.* Ղաֆադարյան, Հաղբատ, 253:

***489. ԽԱՉՔԱՐ.*** նախորդի մոտ, թիկունքին, 8 տող.



ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵ[ԱՆ] ՏՆ Յ-
ՈՀԱՆՆԻՍԻ, ԵՍ՝ ՄԽԻԹԱՐ ՍՊԱՍԱՒ-
ՈՐ ՍՐԲՈՑՍ, ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ
Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԵ[ԱՆ] ԻՆՁ ԵՒ ԾՆ-
ՈՂԱՑ ԻՄՈՑ ԵՒ ԵՂ[Բ]ԱՒՐՈՐԴՈ
ԻՄՈ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ: ՈՐՔ ԵՐԿ-
ԻՐՊԱԳԱՆԷՔ՝ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇ-
ԵՑԷՔ:

*Հրատ.* Դրիմեցի, 39, Երզնկյան, 69, «Ազգ. հանդ.»,VII-VIII, 417, Ղաֆադարյան, Հաղբատ, 254:

**490. *ԽԱՉՔԱՐ*.** Բերդիկ գյուղատեղում, Հաղբատից հարավարևելք, Նեղուցից հարավ, զույգ մատուռի մոտ, մակերեսին և թիկունքին, 15 տող.



[ԹՎԻՆ] ՈԿԱ (1212)
ՔՍ ԱԾ
ՈՂՈՐՄԻ ՅՈՎԱՆ
ԻՍ[ԻՆ] ՅԻՍԱՅԻՆ
ԱԿԻՑ . . . .
ԵՒ ԱՄԻՐՍՊԱՍԱԼ-
ԱՐՈՒԹ[ԵԱ]Ն ԶԱՔԱՐԷԻ
ԵՒ ԻՒԱՆԷԻ, ԵՍ՝ ԳՐԻ-
ԳՈՐ, ՈՐԴԻ ՅԻՍԷԻ, Թ-
ՈՌԻ ԶԶԵՌՆԱՒՈՐԱ-
ՅԱԿՍ ԲԵՐԴԿԱ՝ Վ-
ԱՍՆ ՇԱՀՆՇԱՅԻ ԱՐԵՒ-
ՇԱՏՈՒԹ[ԵԱ]Ն ԵՒ ԻՆՁ
ՄԵՂԱՑ ԹՈՂՈՒԹԵ[Ա]Ն:
ՈՎ ԱՂԱՒԹԷ՝ ՅՈՒԴ . . .

*Հրատ*. Ղրիմեցի, 40, Երզնկյան, 102, Ղաֆադարյան, Հաղբատ, 252:

*Ծանոթ*. Կ. Ղաֆադարյանի աչքից վրիպել են մակերեսի կարճառոտ տառերը, և նա գրել է. «Խաչքարն իր գլխին ունեցել է մի այլ քար ևս, որի վրա են եղել փորագրված արձանագրության, հավանաբար, երկու տողերը, որոնք վերաբերել են ժամանակի թագավորության հիշատակության»: Նրա կարծիքով անվերծանելի է մնում վերջին տողը, որտեղ «Պետք է լինի *ի վայելումն հաստատցելոց* կամ նման մի այլ արտահայտություն»:

Կ. Ղաֆադարյանի մոտ անորոշ մնացած այդ տառակապակցությունը ՎԱՅԼԱՄԻՈՒՅՈԴ-ը, վերծանվում է, բայց իմաստը չի ավարտվում: Արձանագրությունը արժանահիշատակ իրավավճիռ է այն մասին, որ Յիսէի որդի Գրիգորը զիջում է իր օգտին գանձվող պարտադիր մուծումները (*թոռի զծեռնաւորահակս Բերդկա*): Ս. Ավագյանը, հենվելով բառիս նախնական այս հիշատակության վրա, ևս մեկնաբանում է, որ *ծեռնաւորահակ* բարդությունը «առաջանում է *ծեռնաւոր* = գյուղական շրջաններում հարկահավաք պաշտոնյա, հարկահան, գործակատար և *հակ* = հարկ բաղադրիչներից և նշանակում է ծեռնավորի, հարկահավաք պաշտոնյայի օգտին հավաքվող հարկ, տուրք» (ՎԱԲ, 163):

Վճռականապես հնարավոր չէ պարզել՝ Գրիգորն ի՞նքն է ծեռնավորը և իր օգտին գանձվող մուծումնե՞րն է զիջել, թե՞ գյուղից հավաքվող հարկն առհասարակ՝ անկախ ծեռնավորի ով լինելուց:

*Խաչքարի մակերեսին, բացի վերի անկյուններում նշված թվականից լուսանկարում այլ գրեր չնկատեցինք: Նախավերջին տողում, ըստ լուսանկարի, փորագրված է ոչ թե ԹՈՂՈՒԹԵՆ, այլ ԹՈՂՈՒԹԵ՝ պատիվ նշանով (խմբ.):*

**491. *ԽԱՉՔԱՐ*.** Նույն տեղում, ագուցված մատուռի հյուսիսային պատին, խորանից վերև, 3 տող.



ԵՍ՝ ԲԵԿԼԱՐՍ. ԿԱՆ-
ԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ ԻՆ-
Ձ ԵՒ ՄԱՒՐ ԻՄՈ: ՅԱՂԱՒ[Թ]ՍՍ ՅԻՇԵՑԷՔ[:]

*Հրատ*. Ղրիմեցի. 39, Երզնկյան. 102, Ղաֆադարյան, Հաղբատ, 252:

***Ծանոթ.*** Տեղացիների կողմից այս վայրը կոչվում է Գյադուկի ագեղցի: Կ. Ղաֆադարյանի նկատառումով՝ «հավանաբար արձանագրությունը շարունակվել է պատվանդանի վրա, որն այժմ չկա»: Նրա կարծիքով՝ «այն պետք է եղած լինի ***աղաւթս յիշեցէք ի Քս*** կամ ***աղաւթս յիշեցէք աղաչեմ»***: Ներկայացված տարբերակը նույնպես բավարարում է խնդրի լուծմանը:

***492. ԽԱՉՔԱՐ, ԴԵԲԵԴ ԳԵՏԻ ԱՓԻՆ.*** ճակատին 2, պատվանդանին՝ 7 տող.



ՄԲ ԱՒԵՏԱՐԱՆԻՉՆ ՔԻ ՅՈ[Հ]-
ԱՆՆԷՍ:

*Հրատ.* Դրիմեցի, 39, Երզնկյան, 102, ՎՏ, 115, Ղաֆադարյան, Հաղբատ, 252-253:

***493. ՆՈՒՅՆ ԽԱՉՔԱՐԻ ՊԱՏՎԱՆԴԱՆԻՆ,*** 7 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՅ, ՅԻՇԽԱՆՈՒԹ[ԵԱ]Ն ՊԱՐՈՆ ՍԱԴՈՒՆԻՆ, Ի ՏՐ Ո-
ՒԹԵ[ԱՆ] ՏՐ ՈՎԱՆԻՍԻ, ԵՍ՝ ՅՈՀԱՆԷՍ ՔԱՀԱՆԱ ԵՒ ԵՂԲԱՐ[Ք] ԻՄ ՅՈՒՆԱՆ, ԴԱՒ-
ԻԹ, ՅՈՀԱՆ, ՄԽԻԹԱՐ, ԿԱՆԳՆԵՑԱՔ ԶԽԱՉՍ ԵՒ ԶԿԱՐՄՈՒՋՍ Ի ՀԻՄԱ-
ՆՑ, ԶԻՄ ԳՆԱԾ ԷԳԻՆ ԵՒ ԶԱՐՏՆ ԻՄ ԽԱՉԻՍ ՀԷՐԵՆԻ[Ք] ՏՎԻ, ՈՐ ԱՄԷՆ ԱՄԻ
ԱԱՏ ՈՒՐ-
ԱԽԱՆԱՆ ԵՒ ԱՍԵՆ ՄԵԶ՝ ԱԾ ՈՂՈՐՄԻ, ԵՒ ԾՆՈՂԱՑ ՄԵՐ ԵՒ ՍՆՈՒՑՈՂԱՑՆ: ՈՎ ԽԱՓ-
ԱՆԵԼ ՋԱՆԱ՝ ՈՒԴԱԻ ԵՒ ԿԱԵՆԻ ՄԱՍՆԱԿԻՑ [Է]:
Ի ԹՎԻՍ :ՉԻԲ (1273):

*Հրատ.* Երզնկյան, 102, Ղաֆադարյան, Հաղբատ, 253:

***Ծանոթ.*** Կ. Ղաֆադարյանն այս երկու արձանագրությունները հրատարակել է մեկ թվահամարի տակ: Նկատի ունենալով Դիվանի առանձնահատկությունները, մասնավորապես թեմատիկ ամբողջականությամբ և ինքնուրույնությամբ վիմագրելը, գերադասել ենք զատել միմյանցից իբրև նույն հուշարձանի առանձին բաղադրամասեր:

Կ. Ղաֆադարյանը տեղեկացնում է. «Խաչքարն ընկած է եղել Դեբետ գետի մեջ, բայց երկաթուղու նոր գծի վրա աշխատող մեքենավար Գրիգոր Գուլեցյանը 1958 թ. աշնանը վերամբարձ մեքենայով գետից հանել և կանգնեցրել է իր տեղում»:

Կամուրջն իսպառ ոչնչացված է: